

- Էլի՛ մի քիչ ու կը հասկանաս, աղբէր ճան:

Շեշտ, բառ հարազատ են բերնէս, Թիֆլիսէն նոր ժամանած մէկու մը առողջանութեամբը:

Ապշահար կը նայի երեսիս: Իր զարմանքը դժուար չէ բացատրել: Ուրկէ՞ ո՛ւր հայրենի անոր շեշտը՝ խորը սա լեռներուն: Կ'ուզէ խօսիլ: Կ'ընդդիմանամ: Ա՛լ մտած ենք փռուկերու տարածքը: Կիրի գնորդները թուրքեր են, քանի որ դրամը անոնց մօտն է հիմա: Տեղին վայրագութիւնը չեն նուաճեր ո՛չ աղբիւրներով գոյաւոր սքանչելի պուրակները, ոչ ալ փրթած, միշտ կոտորտելիւ վրայ լեռնաշերտերուն խռովիչ, նկարչագեղ ճարտարապետներուն: Անհուն արուեստագէտ մը հեքիաթին մուրճովը կարծես պատած է սա կողերուն ու փլած, նորոգած ու հեղինակած է, ձեւի դրած սա անբացատրելի, բայց իրաւ գեղեցկութիւնը, որ կը բխի ամէնէն վայրի նկարի մը բաժակէն, ծաղիկի նման ու ձեռակերտ վայելչութեան մը նման:

- Էս ի՛նչ ա, աղբէր ճան...

Յետոյ պիտի իմանայի, որ ան տառապած էր ամէնէն շատ սա «փախուստի» ընթացքին, ինչպէս տարազեց գեղէն մեր հեռանալը, ինք, որ օսմանեան կայսրութեան ասիական տարածքը կտրեր-անցեր էր, առանց ենթարկուած ըլլալու լռելու ստիպողութեան: Տեղ մը կարդացա՞ծ էի, թէ հիմա կը տարուիմ այսպէս մտածելու՝ խօսիլը, մա՛նաւանդ յաճախանքը, մարմաջը բնախօսական երեւոյթ մըն է կարգ մը մարդոց համար, ինչպէս քերուրտութիւնը, համակրական ծիծաղը, յօրանջը: Աւելի ուշ պիտի գիտնայի, որ լռելն ալ, զայն «հագնիլն» ալ նոյն գիծի նման երեւոյթներ են, թերեւս ենթակայ լեարդին ու, հիւանդութիւն մը ուրեմն:

Քանի կը խորանանք, բլուրները կը դառնան աւելի ողբալի, քանի որ անբացատրելի զայրոյթը, որուն գինն են անոնք, հազարաւոր դարերէ ի վեր կը պահէ իր խորութիւնը, շեշտուելով, ո՞՞՞՞ր ըլլալով՝ բզիկ-բզիկ կողերէն ժայռերուն, որոնք իրար կը հարուածեն ու կը մնան իրենց